

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ	ԷՁ
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. - Պատմություն Հայ այց Աղօթամատույցին (Շար.) . . .	53
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՄԻՔԱՅԷԼ. - Հայաստան- նի բերդերը (Շար.) . . .	65
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. - Հայերէն գրե- րու յօդանուն տարեթիւը . . .	69
ՔԻՊՍՐԵԱՆ Հ. Կ. - Յովհաննէս Սարգիստա- վադ. . .	106
ԳՐԱԿԱՆ	
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Բանաստեղ- ծական արտագրութիւնը Խորհրդ. Հա- յաստանի մէջ (Շար.) . . .	74
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Դէպի Աւա- րայր (Շար.) - Թատերգութիւն չորս ա- րարով: Արար Բ. . .	89
ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ. - Իմ գիշերիս ընծան . . .	88
ԱԹՄԱՃԵԱՆ ՄԱՌԻ. - Մայր մը կ'ըսէր . . .	102
ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Վարժարանը . . .	104
— — Նայիրի . . .	104
— — Նորայայտ գետ երեւանի մէջ . . .	105
— — Սրբառաջ խաչքարը . . .	105
ԼԵՃՈՒԱԿԱՆ	
ՏէՐ ՂԱԶԱՐԵԱՆ Հ. ԵՓՐԵՄ. - Հետադարձ թէ յետադարձ . . .	81
ԳՐԱՆՕՍԱԿԱՆ	
ՔԻՐՈՏԵԱՆ Յ. - «Բնագիտութեան և տեխնի- կայի պատմութիւնը» տպ. Երեւան, 1960 . . .	112
— — «Ներկիւր և քաղաքներ հին հայկա- կան ձեռագրերում» (տպ. Երեւան, 1941) Աշխէն Խ. Յարութիւնեանի . . .	113
— — Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաս- տասիրութեան» (Հրտ. Ս. Ս. Արեւշա- տեան, Երեւան, 1960) . . .	114
— — «Ա.Մ.Հ. Եգիպտոսի ցահանգը և հա- յերը» Ա. Ալոյոյաճեանի (Գահրէշ, 1960) . . .	114
— — «Եղիշէ Սրբգ. Գուրեան Բ. Շնորհա- լի», Գարեգին Պարթ. Խաչատուրեանի (Խաչատուր, 1960) . . .	114
— — «Հայ գիտնականներ, հրապարակա- խօսներ, ժողովախօսներ» Յովհ. Պետրո- սեանի (Երեւան, 1960) . . .	115
— — Rugs of Armenia, Յարութիւն Ռա- ֆայէլեանի (Նիւ Եորք, 1960) . . .	116
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
ՔԻՐՈՏԵԱՆ Յ. - Տպագրութիւններ Խորհրդ. Հայաստանէն . . .	83

SOMMAIRE

		PAGE
	LITURGIE	
53	HATSOUNI P. VARDAN. — Histoire du Bréviaire Arménien (Suite)	53
	HISTOIRE	
65	HOVHANNESSIAN P. MICHEL. — Les fortes-resses de l'Arménie (Suite)	65
	PHILOLOGIE	
69	GRIGORIAN P. MESROP. — La date de l'invention de l'alphabet arménien	69
06	KIBARIAN P. C. — Hovhannes Sarkavag Vrt.	106
	LITTERATURE	
74	HOVHANNESSIAN P. VAHAN. — La poésie en Arménie soviétique (Suite)	74
	— — Vers Avarayr - Drame en quatre actes. Acte II ^o	89
89	ARSEN YERGATH. — L'offrande de ma nuit	88
02	ATMADJIAN MARIE. — Une mère disait	102
04	SERABIAN ARAMAYIS — Le Collège	104
04	— — Naïri	104
05	— — Un nouveau fleuve à Erivan	105
05	— — La sainte <i>Khatchkar</i>	105
	LINGUISTIQUE	
1	DER GHAZARIAN P. EPHREM. — L'orthographe du mot « <i>Hétagay</i> »	81
	RECENSIONS	
2	KURDIAN H. — « <i>De l'histoire de la physique</i> » (Erivan, 1960)	112
	— — « <i>Teintes et encres dans les anciens manuscrits arméniens</i> », de A. K. Harouthiounian	113
	— — « <i>Définitions philosophiques</i> » de David Anhaghth	114
	— — « <i>L'Egypte et les Arméniens</i> » de A. Alboyadjian	114
	— — « <i>Eliché Tourian, Chenorhali II</i> » de l'Arch. G. Khatchadourian	115
	— — « <i>Savants, écrivains et journalistes Arméniens</i> » de H. Petrossian	115
	— — <i>Rugs of Armenia</i> de H. Rafaëlian	116
	ECHO ARMENIEN	
	KURDIAN H. — Impressions de l'Arménie soviétique	83



1843 ~ 1961
 200. SURH

ԹԻԻ 3 - 5

ՄԱՐՏ - ՄԱՅԻՍ

பு டு டு டு டு டு டு

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXIX^o année, 1961, N. 3 - 5 Mars - Mai

ጥሁያሆበኮቲኮኒ

24303 420645593377

(Շար. տես «Բազմալիս» 1961, թ. 1-2, էջ 10)

4. - Արեւագալի պաշտօնը. - Արեւագալի կարգը, շատ աղքատ նախորդ շրջանին՝ այժմ ճոխացած ու լրացած է ազօթքներով եւ երգերով: Մաքենեաց խորատքը ասոր սկիզբը կը դնէ «Նղիցի» սաղմոսը, զոր «պատուաւորին» ըսել կուտայ՝ եթէ կայ, եւ որմէ 1284ի ժամագիրքը կը նշանակէ այժմու երեք տունը, ապա Փառք Հօր ու եւ խաղաղութեան. եւ երկու աղբիւրները կը յարեն Արքիմուքիւն եւ փառք, որոնք այնուհետեւ հաստատուն կը մնան ժամակարգութեան մէջ: Խրատքը յետոյ կը կարգէ «չրկ. Յարեւիցի եւ իւր տաղն», առանց վերապահելու քառասնորդաց, մինչ գիտէ նշանակել «աղուհացերուն զՏէր ամենակալն»: Այս երգը 1284ի օրինակէն առնուած է՝ Շնորհալիի շարականներուն խումբին վերնագրովը. «Արեւագալի շարական» գլխի Նղիցի անուն Տեառն օրհնեալ». այսպէս նաեւ յաջորդները: Որ եւ է ազնարկութիւն չունի աղուհացին, զոր սակայն կը նշանակէ ճաշու երգերուն վրայ: Մարիունի ժամագիրքը, որ դուրս թողած է ճաշու երգերու մեծ քարոզներն

Էւ աղօթքները, որ յայտնապէս քառասնորդաց յատուկ էին, ընդօրինակած է արեւադարի ու խաղաղականի երգերը, ուստի իբրեւ ամէն օր։ Օշինինը՝ որ նոյնպէս ամէն ինչ օրինակած է, առանց նըշանակելու օրերու խորութիւնները, մինչ Տէր ամենակալին վրայ կը գրէ։ «Որ ասի աղցիցն»։ Թ. Մեծօրհեցւոյն ժամագիրքը կը շարունակէ պահել նոյն դրութիւնը։ Դիտելի է որ թէ ասոր եւ թէ յաջորդներուն յորդորակները չկան հոս. եւ ասելի ու չըջանի յաւելուածներ են, թէ ի՞նչ էր տաղը, չենք գիտեր. Օշինինը եւ Մարիունինը բնաւ չեն ակնարկեր տաղի։

Մաղմոսներու կանոնները կարգով բաժնուած են ժամերու վրայ. մին՝ բնականապէս Հինգերորդը (իբրեւ զի բարի), վիճակած է այս ժամուս եւ տեղւոյս, ինչպէս կը գրէ Խրատքը. «Արեւազալի կանոնիս սկսանելն աւագերիցու զասին է». նոյն կանոնն ամբողջապէս օրինակուած է հոս՝ Մարիունի ժամագրքին մէջ։

Յետ քարոզին եւ իր աղօթքներուն, որոնց վերջինը 1284ին մէջ այժմու ձեւն ստացած է, կու գան՝ ըստ Խրատներուն

նոյն զբաղմունքն Մովսէսի Եզնկ. եւ ապա Մարիունին Աղաղակեցէ՛ք սաղմոսն ու ձգմաւորք Աստուծոյ երգը, եւ մաղթանքն Աղաչեմք ողորմեա՛ որ կը պակսի 1284ի մէջ: Ըստ նոյն վկաներուն ու Մովսէս Եզնկացւոյն կան այժմ ու կը յաջորդեն անոնց՝ քրդ. Սուրբ Բագմաւորք եւ աղօթք. Սուրբ Եւ Տէր, որուն 1284ին եւ Մարիունին կը յարեն Յիշեա տէր գալաշտօնեայս, Աստուած Աստուած իմ (ԿԲ) սաղմոսը, անշուշտ այժմուս չափով, որ կը տեսնուի եւ Մարիունի օրինակին մէջ. իսկ ԿԲ սաղմոսը կայ եւ յոյն ժամագրքին մէջ, Առաւօտուն, ինչպէս ըսինք, եւ առանց ԿԳին, որ հայկական յաւելուած է: Մովսէս չի զբաղիր սաղմոսներով ու երգերով: Լոյս արարիչ լուսոյ երգը, Լուսով ԲՈ Քրիստոս աղօթքը, ըստ Խրատուց «հասարակաց» (պակաս Մովսէսի քով), քրդ. Եւ Եւս Խաղաղութեան (Օշին՝ ա-յո՛, Մարիունին՝ ոչ), Փառաւորեցուք, աղ. Զառաւօտու աղօթքս, սղմ. ԻԲ Տէր հովուեցէ, (նոյնպէս անշուշտ արդի չափով եւ նման Մարիունի ժամագրքին) երգ ձանապարհ եւ ճշմարտութիւն, մաղթ. Տէր ուղղեա (Մովսէս չունի), քրդ. Աղաչեցուք գաղմեակալն, աղ. սրբոց տօնից՝ Առաջնորդ կեցաց, պահոց՝ Տէր Աստուած Փրկիչ. եւ Հայր մեր ըստ Խրատուց. վերջինս ձանապարհ երգին քով ալ «տաղ» կը նշանակէ, եւ բոլոր մաղթանքներն «հասարակաց» ըսել կու տայ:

Իսկ Աստուած Աստուած իմ սաղմոսը յիշատակուած է Առաք. Սահմանադրութեանց (Բ. ԺԺ), կեղծ Աթանասի կուսութեան ճառին եւ Անտիոքացւոց պաշտամունքին մէջ՝ ըստ Ոսկերեւանի ճառին յԱննա (Հյրթ. յն. ԾԵ, 427). կապուած նոյնպէս Առաւօտուն հետ. իսկ Պաղեստինի մէջ կը կիրարկուէր նաեւ առաւօտեան աղօթքին մէջ, եւ ապա նորաստեղծ Արեւադալին անցաւ՝ ըստ Կասիանոսի (Բէռլ. մէր, Ա. 143, 145): Այսպէս նաեւ Տէր հովուեցէն (ԻԲ) Ոսկերեւանի օրով կ'երգուէր առաւօտուն: Չեմ գիտեր՝ ուստի՞ կը հանէ Տաթեւացին՝ երբ կ'ըսէ այս վերջինիս մասին. «Առաջինքն փոխ սաղմոս»

սէին, ... իսկ յետոյ յաւելին չորս փոխ» (Սղմ. 74), ուր մեր քով երեւելէն ի վեր չորսէ կազմուած է: Իսկ «տաղ»ը նշանակած է երկու կարճ երգերուն հետ միայն:

5. - Յերեկի երեք ժամերը. - Յերեկի երեք ժամերուն վրայ Գ. չըջանի ձգուած վարագոյրը արդէն մասամբ մը մերկացած, աւելի կը բացուի հոս, ցոյց տալով անոնց մէջ՝ մաս մը թերեւս հիներէն ու չիլիւում, եւ մաս մ'ալ՝ նորաստեղծ տարրեր: Այսպէս Մաքենեաց Խրատքն այս եռամասն պաշտամունքին այն սկզբնաւորութիւնը կու տան՝ ինչ որ գիշերայինին, եւ յետ Օրհնեա Տէրին աւագերէցը կ'ըսէ. «Արհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ», զոր 1284ի եւ Թ. 252 ժամագրքերը միայն զրած են պաշտամունքին վերջը, ոչ սկիզբը. այսպէս եւ միւս երկու ժամերունը, ինչ որ կը ներկայացնէ անհաստատ վիճակ մը Խրատներուն համաձայն. Ողորմեան՝ որ առաջին անգամ կ'երեւի հոս եւ յաջորդ երկու ժամերու սկիզբը, եւ հաստատուն կը մնայ բոլոր ժամագրքին մէջ, «փակակալն կամ սարկաւազն ասէ միայն յատեանն, եւ այլքն միաբան ձայնակցին՝ ստէպ ծնրադրութեամբ. եւ յորժամ վճարի Ողորմեայն, յատեանն ելանեն եւ զերդ սրբոյն Ներսիսի միաբան ասեն. Արհնեմք գեղ Հայր անսկիզբն», որ կայ Օշին եւ միւսներուն քով ալ: Կը նշանակէ իրենց կարգին միւս երկու ժամերու երգերն ալ, առանց ակնարկելու քառասորդաց: Արդեօք հանապազօրեա՞յ էր սկիզբը, թէ Խրատքը փոյթ չէ ըրած ճշտել ժամանակը, անորոշ է. 1284ի ժամագրքը առաջինին վրայ կը գրէ յայտնապէս. «Երբորդ ժամուն աղուհացից, բնականապէս նոյն իմանալով լուեայն նաեւ միւսներուն վրայ, եւ համառօտութեան համար զեղչելով «աղուհացիցը»: Այս պատճառով Մարիունի ժամագրքն ալ դուրս է թողեր ատոնք երեքն ալ, իբր ոչ ամէնօրեայ, ուր Արեւադալին՝ ըսինք՝ առաջ բերած է:


Հոս կայ այժմ՝ Խրատներուն մէջ՝ Յա-

մեկայն ժամ մաղթանքն եւ Օրհնութիւն եւ փառք, որ չեն տեսնուիր 1284ի զբաղմունքին մէջ, ոչ ալ Մովսէս Եզնկացի կը յիշէ. դուցէ յետոյ աւելցուած են Խրատներուն մէջ, ուր ատոնց կը յաջորդէ սաղմոսներու «առաջին կանոնն» որ սաղմոսաւանի կարգով վեցերորդն է, «Տէր ապաւեն». եւ ինչպէս զրած է Մարիունին: Ըսինք թէ Մանգակունիին քարոզներն եւ աղօթքներն ալ կրնային յատկացուիլ քառասորդաց, որով ԺԳ. դարուն Կիրակոս կրնար զանոնք սահմանել «զքարոզս աղուհացից եւ զաղօթս նոցա». եւ Մաքենեաց Խրատքը կոչել «պահոց չոր քարոզ» եւ «զոր աղաւթքն», եւ ամէնօրեան «զալար քարոզ եւ աղաւթք»: Գր. Սկեւռացին կը յիշէ նոյնպէս «յերբորդ ժամուն... զքարոզն եւ զաղօթսն՝ որ պահոցն ասին... Նոյնպէս եւ զվեց ժամուն... եւ զինն ժամուն» (417): Իսկ 1284ի ժամագրքին սահմանը՝ Միաբան ամենեքեանին վրայ, «քարոզ երբորդ ժամուն Ողորմեային» առանց զանազանութեան, թերի է անշուշտ, ինչպէս Խրատուց «պահոցն» «աղուհացից» ալ, զոր կ'ուղղէ Գանձակեցին: Դարձեալ Խրատքը քառասորդաց մէջ չորրէն փոխանակել դալարին հետ, այլ կը յաւելուն անոր վրայ. գէթ այդպէս կ'իմացուի բացատրութեան: Նոյնպէս կը յատկացնէ չոր աղօթքին «սաղմոս» եւ Արհնութիւն եւ փառք, զորս 1284ի գրքը չափերը կը պարզէ եւ կ'ընդլայնէ՝ «Մաղմ. Տէր Աստուած արհնեալ: Եւ Եւս Խաղաղութեան», ինչպէս քարոզին նախադրեալն, զոր ունին Մարիունին եւ 1598ին բան, զոր առնին Մարիունին կը եւս: Իսկ Առաջնորդեա մեզ աղօթքին կը յարէ անգամ մ'ալ Յիշեա Տէր գրք պաշտօնեայս՝ Մարիունի հետ եւ ուրիշներու, անոր թիւն երեկոյին հետ վեցի հանելով: Ապա Տէր հովուեցէ գիս սաղմոսը, քրդ. Գոհաբանելով, եւ աղ. Խաղաղութեամբ, Գոհաբանելով, եւ աղ. Խաղաղութեամբ, Գոհաբանելով, եւ աղ. Խաղաղութեամբ: Նախ քան մեկնելէ՝ Մաղաղութեան Խրատքն ալ կը յիշէ «Խաղաղութեամբ քո» աղօթքը: Տէր հովուեցէն

սկիզբէն երկու սաղմոսէ կազմուած ըլլալու է, ինչպէս կ'երեւի Օշինի եւ Մարիունի ժամագրքին մէջ. եւ երկրորդին 10 եւ 12 համարներն յիշած է Ս. Բարսեղ իր Կանոններուն մէջ, խօսելով այս ժամուս մասին (չէ. հյ. ԼԷ):

Նոյն Խրատքը կ'անցնի «Երբորդ Ողորմեային» որ կը սկսի՝ Աւրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ: Ողորմեա ինձ Աստուած, Ներսէսի երգը Խաղաղութեան լոյսն արեւուն՝ զոր «ի յատեանն ասեն»: Յամեմայն ժամ եւ Օրհնութիւն եւ փառք նշանակուած միւս ժամերուն, մոռացութեամբ բաց թողուած են հոս, չկան եւ ի ժող. 1284ին: Կը յաջորդէ «Երբորդ կանոն» սաղմոսի, որ է Եօթներորդը «Ողորմեայն եղերուք»: Ապա դարձեալ «չոր քարոզ» եւ «չոր աղօթք» Մանգակունիին, եւ «սաղմոս» եւ «Աւրհնութիւն եւ փառք», 1284ի ժամագրքէն նշանակուած՝ Արթուն մտօք, Զգեցո մեզ տէր, եւ «Տէր մի՛ յիշեր զմեզս մեր», որուն կը յաջորդեն Խրատքին «զալար քրդ. եւ աղօթք», այն է 1284ի, Օշինի եւ Մարիունի վասն Կիրակոսի Գոհաբանելով, եւ Կաղմոսեայն Յիշեա տէր գալաշտօնեայս: Ապա փոխ Երանի որ Խորհի՛ յիշուած եւ Մաքենեաց Խրատէն, եւ կաղմոսած երկու սաղմոսէ (Խ, Զ), ինչպէս կը տեսնենք Մարիունի աղօթամատոյցին մէջ. երկրորդը՝ Որ բնակեալ քրդ. Խընդրեցուք, եւ աղ. Հայր գրքութեանց՝ ըստ չորս աղբիւրներուն: Հայր մերի մասին խօսեցանք:

Կը յաջորդէ՝ ըստ Խրատքին՝ «Երբորդ Ողորմեան» այսպէս. «Արհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ. Ողորմեա ինձ Աստուած». յետոյ երգ տեսան Ներսիսի Զարչապաղցեալ Բեգ, զոր նախընթացին պէս «յատեանն ասեն»: Ապա «Յամեմայն ժամ աղաչանք իմ... եւ Արհնութիւն եւ փառք», նոյնպէս անգոյ 1284ին: Որմէ վերջ կ'ըսուի սաղմոսի «Երբորդ կանոն», կամ սաղմոսաւանին՝ ութերորդը՝ «Ի նեղութեան իմում»: Ապա «պահոց չոր քարոզ» եւ «չոր աղաւթքն», որ 1284ի ժամագրքին Սուրբ սրտիւ եւ Տէր գորու-



364-66

10. - Բարգաւանում եւ կարգաւորութիւն պաշտամունքի. — Դիտելի է որ մեծագոյն բարգաւանումը տեսանք այս շրջանին՝ քան բոլոր նախորդներուն՝ Աղօթանոցին բովանդակութեան մէջ, որ հասած է գրեթէ իր վերջին կատարելութեան, ի բաց առեալ Հանգստեան ժամը՝ որ տակաւին հասարակաց աղօթքին մէջ չէ մտեր:

Շարահնոցն ալ այս շրջանին գտած է իր կազմութիւնը, սակաւ շարահաններու պակասով, 1287ի եւ 1295ի երկցագոյն օրինակներու մէջ, դրուած Սիւ: Որո՞նց կը պարտինք այդ արդիւնքը: Չենք կարող դրականապէս մասնաւորել անոնք. բայց դիտենք հայրապետներ՝ որ յատուկ խնամք ցոյց տուած են աղօթքի բարեկարգութեան: Այսպէս Գրիգոր Վկայասէր հեղինակ եղաւ սուրբերու տօներու բազմացման ու Տօնամակին: Տեսանք Ն. Շնորհալիի գործօնէութիւնն ալ ուղղակի

պճնելու պաշտամունքը՝ յատկապէս երգերով եւ կարգաւորութեամբ ժամապաշտութեան:

Գալով Կիլիկեան յաւելումներուն, յիշեցինք Կոստանդին Ա.ի ժողովին կատարած մէկ սրբազրութիւնը ժամապաշտին մէջ. եւ ատոր հետ կը սահմանեն «պսոլը» դերս եկեղեցւոյ դրել արուեստաւորաց եւ դիտնոց եւ ուղղափառաց» (Կիր. 170): Կը կարգանք եւ Լամբրոնացի Գէորգ Վ.ի մասին (+ 1301) թէ «առնէր եւ դանձալովս տօնից տէրունականաց եւ սրբոց Աստուծոյ» (Պտմ. Հյկ. Դպր. 601): Կիլիկիոյ մէջ ալ եղան, ուրեմն, նախանձալոյ հոգիներ՝ որ դերունեցան հասարակաց պաշտամունքի պճնադարձութեան մէջ, եւ անոնց դործն է այս ժամանակի յաւելումները:

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ՝ ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒՆ

Վերջերս, Սփիւռքի կարգ մը քերթերուն մէջ տեսանք «Բագմավէպ»էն արտատպումներ. դժբախտաբար, հեղինակի ստորագրութեան հետ, չէր ներշնակուած աղբիւրը:

«Բագմավէպ»ի խմբագրութիւնը դիմեց ուղղակի հեղինակներուն, իմանալու համար՝ թէ արդեօք յօդուածագիրներն իրե՞նք են որ ուրիշ քերթերու ալ զրկեր են իրենց ուսումնասիրութիւնները: Ժխտական պատասխան տուան:

Յօդուածագիրներէն ոմանք ալ իրենք դիմեցին մեզի, իմանալու համար՝ թէ ինչո՞ւ մեր խմբագրութեան ուղղած իրենց յօդուածը լոյս կը տեսնէ նաեւ ուրիշ քերթերու մէջ:

Պատասխանեցին՝ արդարացելով մեր խմբագիրները, եւ պաշտպանեցին արտատպումի իրաւունքը, անուշադրութեան հետեւանք մկատելով եղածը:

Ուստի, ամէն արտատպում քոյլատրելով — եւ այդ՝ յանուն հայ մշակոյթի տարածման — փափաքելի է որ արտատպուած ամէն յօդուածի տակ, մեր քերթէն եւ կամ ուրիշ տեղէ, նշանակուի նաեւ աղբիւրը, չակերտներու մէջ, ինչպէս սովորութիւն է:

ԽՄԲ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԲԵՐԸ

(Շար. տիւս «Բագմավէպ» 1960, թ. 11-12, էջ 292)

ՀԱՆԴԱԲԵՐԴ

Սիւնեաց աշխարհի նշանաւոր բերդերէն մէկն է Հանդաբերդը, որու հիմնադիր կը համարուի ըստ Մովս. Կաղանկատուացիի Ապրամ Ատրնբրես՝ որդի Սալի. «որ ի Տոհակայ եւ տէր Սիւնեաց, սա չինէ ըզբերդն Հանդու, եւ զապարանս իւր անդ եղեալ ի գիւղն՝ որ կոչի Վայկունիք»¹: Բերդը հաւանաբար շինուած է Բագրատունեաց իշխանութեան շրջանին, եւ ապա անցած Սիւնեաց իշխաններուն ձեռքը. այժմ կը կոչուի Լեւա-դալա: Մովսէս Կաղանկատուացի պատմիչն է որ այս բերդին մասին երկար ծանօթութիւններ կու տայ. եւ Ատրնբրես, որ շինողն էր բերդին՝ ինչպէս տեսանք, գերի կ'երթայ Պարսկաստան եւ ժամանակ մը վերջ վերադառնալով կը վախճանի, ձգելով իր ժառանգութիւնը իր երկու որդիներուն՝ Գրիգորի եւ Ասուէթի:

Գրիգոր կը չինէ Հաւախացի բերդը, եւ հոն քաշուելով կ'իշխէ այդ շրջաններուն վրայ: Ասուէթ չուտով կը մեռնի եւ վրայ: Ատրնբրես կը շինուի Հանդաբերդը կը մնայ Գրիգորի. ասիկա կ'ունենայ հինգ որդի. երէց որդին չուտով կը սպաննուի հակառակորդներէն. միւս որդին Սահակ, որ Սեւադա ալ կոչուած է, իր քաջութեամբ կը տիրէ շրջակայ երկիրներուն. ասիկա ուսումնասէր իշխան մը եղաւ, գերն ու գրականութիւնը ծաղկեցուց իր երկրին մէջ, զպրօններ բացաւ. իր դէմ էլաւ Սմբատ Բագրատունի թագաւորը 890-914ի առեւները, բայց բան մը չկրցաւ ընել. Սեւադա ունեցաւ երկու որդի, Գրիգոր եւ Դաւիթ:

Գրիգոր կ'ունենայ երկու որդի, Սեւա-

դա՝ որ Իշխան անունով ծանօթ է, եւ Ատրնբրես: Իշխան կը ծնանի չորս որդիներ. փոքր որդին որ Ատրնբրես կը կոչուէր, յետոյ կոչուեցաւ Սենեքերիմ. ասիկա իր քաջութիւններուն համար թագաւորական պատուին հասաւ, Պարսից թագաւորէն ստանալով թագ եւ դաւադան. այս լուրն առնելով՝ յունաց կայսրը, ինքը եւս թագ եւ դաւադան կը զրկէ եւ հանդիսաւոր կերպով թագաւոր կ'օծուի հայրապետէն:

Հանդաբերդի պատմութիւնը անծանօթ կը մնայ մինչեւ ԺԲ դար. այնուհետեւ դարձեալ կը փայլի նոր իշխանութեան յայտնուելով. Դովեաններու իշխանութիւնն է ատիկա²:

Դովեաններու իշխանութիւնը
Հանդաբերդի մէջ

ԺԲ. դարուն Հանդաբերդի վրայ կ'իշխեն Դովեանները. ասոնք ծագումով առաջ եկած են Ջաքարէի եւ Իւանէի քրոջ Դովի-ի սերունդէն եւ կոչուած Դովեանք: Դովի Ջաքարեան Սարգիս իշխանին աղջիկն էր, եւ ամուսնացած էր Սաչէի իշխան՝ Հասանի հետ, եւ ոչ թէ Ղարա Գրիգորի հետ, ինչպէս ցոյց կու տայ Գարեգին Կթղ. իր Սագրականք գրքին մէջ³:

Հասանի որդին էր Գրիգոր, որ ամուսնացած էր Ասփայի հետ. Ասփա, որ աղջիկն էր Տարսահիճ իշխանին, հարուստ նուէրներով եւ հողերով հարս՝ կու դայ եւ կը զարգարէ իր երկիրը եկեղեցիներով եւ վանքերով: Սակայն ըստ Կարապետ եպիսկոպոսի, Դովի եւս իր պապենական ժառանգութեան շատ մը հողեր օժիտ կը բերէ իր ամուսնուն. այս ենթադրութիւն-

1. Մովսէս Կաղանկատուացի, էջ 69-71:

2. Արցախ, էջ 281-291:

3. Սագրականք Ա. էջ 19-20: